

ուսկից կրնար տեսնել հայկական գունդին երեւալը, եւ Վահրիճ դռան քով կանգնեցաւ՝ ինչպէս իրեն պատուիրել էր Գուրգէն, յոյն իշխանը երեւցաւ իւր բոլոր թատերական ծանրութեամբ եւ քաղաքավարութեամբ ութ-տասը ծառայներով. Բիւզանդական կոտորտութներով ու ձեւերով պատասխանեց Գուրգէն, եւ Կոստանդնուպոլսոյ վրայ խօսակցութիւններ բացաւ, որպէսզի ժամանակն անցնի, եւ աչքը շարունակ ճամփուն վրայ էր: Յոյն իշխանը տեսնելով Գուրգէնի ուշադրութիւնը.

— Կարծեմ այս տեսարանը քեզի շատ գեղեցիկ երեւցաւ, վասնզի միշտ այն կողմը կը նայիս,— ըսաւ:

— Այո՛,— պատասխանեց Գուրգէն, տեսնելով հայ գունդին ծայրը եւ յանկարծ ձեւը, կերպը եւ ձայնը փոխելով,— այս տեսարանը, այս բերդը, այս կարասիքը, ամենն էլ իմն են եւ կը զարմանամ թէ որո՞ւ թոյլտուութեամբ դու եկեր, տիրացեր եւ նստեր ես:

— Սորա տերը հայ մ'է, որ արաբաց դեմ պատերազմելով մեռած է, եւ ես բարձրագոյն հրամանաւ տիրացեր եմ:

— Այդ սորա տեր հայը ես եմ, եւ դու եթէ կարդալ գիտես՝ ահա նորա հրովարտակը:

— Այդ հրովարտակը շատ հին է,— ըսաւ յոյն իշխանը արհամարհոտ աչք մը ձգելով հրովարտակին վրայ.— դու եթէ ո'չ հրովարտակ՝ այլ Փոքրիկ թուղթ մը բերէիր Կարնոյ կուսակալէն աւելի ազդեցութիւն կարելի է ունենար:

— Եթէ դու չես հնազանդիւր կայսեր, ես գիտեմ հնազանդեցնել իրեն ապստամբները:

— Իմ տանս մէջ ինձի սպառնալիք ընելու նաեւ կը համարձակի՛ս. եւ չե՛ս իմանար, անմիտ հայ, թէ իմ ձեռաց մէջն ես եւ թէ ակնարկ մը միայն բաւական է քեզ եւ քու ընկերներդ կապել ու պարիսպներուն բարձրութենէն վար նետել: